

Բ Ե Ջ Մ Ե Ս Ե Պ

Օ Ր Ա Գ Ի Ր

ԲՆԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆ

ԳԻՏԵՆԵՐ

Բ. ՏԱՐԻ, ԹԻԻ 2.

1844

ՅՈՒՆՈՒԱՐԻ 15.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՄՏԱԿԱՆԱԿԱՆ ԹԻՒՆ

Բաժնի :

ՈՒՍԻՆ չեղած պարզ գիշեր մը աչքդ երկինք դարձուցած ատենդ տեղ տեղ երկինքը լուսաւոր կը տեսնուի, իբր թէ հոն լուսաւոր ամպի կտոր մը գտնուէր. աս լուսաւոր տեղուանքը Բալ կ'ըսուին : Երբ թէ որ դիտակով նայելու ըլլաս, իրեք կերպով կը տեսնես :

Այսինքն որ հարիւրաւոր մանր աստղեր իրարու մօտ կեցած են, ու պարզ աչքով բոլորը մէկէն ճերմակ լոյս մը կ'երևնան. վասն զի աստղերը իրենց մանրութեանը համար զատ զատ չեն տեսնուիր :

Այլընդորդ, կը տեսնուին անանկ աստղեր որ իրենց չորս դին լուսաւոր մըթնոլորտ կամ բալ ունին, և շատ անգամ ասանկ բալ ունեցող աստղերէն

քանի մը հատը կամ շատը քովէ քով եկած են : Եւ տեսակ աստղերուն մէջ շատ կը գտնուի որ բալը իրենց չորս դին հաւասար պատած չէ, հապա մէկ դին անկանոն ձևով մը աւելի երևնալով՝ կարծես թէ գիսաւորի պէս պոչ ունին :

Այլընդորդ, այնպիսի բալեր ալ կան, որ աղէկ դիտակով կը տեսնուին երկնքին այլևայլ տեղուանքը ամպի պէս լուսաւոր կտոր մը, որուն մէջ աստղ չկայ, հապա միայն նոյն բալին վրայ տեղ տեղ աւելի փայլուն՝ տեղ տեղ ալ աղօտ :

Եւ բալերուն և բալաձիգ աստղերուն վրէ շատ կերպ մտածութիւններ ըրին աստղաբաշխներն ու բնագէտները. իսկ Ներշէլ անգղիացի համբաւաւոր աստղաբաշխը շատ ճիշդ գննութիւններէն ետքը ասանկ մեկնութիւն մը կու տայ : Արեւիկէ թէ քանի որ աստղերը ստեղծուած չեն՝ բոլոր տիեզերքը պատած էր ասանկ լուսաւոր նիւթով մը, որ արարչութեան չորրորդ օրը շատը խտացան ու նիւթաւ կան աստղեր եղան. աս վարդապետութեանէն կը հետեցընէ՝ թէ ատեն

1 Լատ. և իտալ. Nebula. Ինչուան հիմա մեր գրքերուն մէջ աս բառը Դիֆուսի թարգմանուած էր. իսկ աս յօդուածիս մէջ աւելի ճշգրտութեան համար nebula բառին տեղը Բալ գրինք, nebulosus ածանցմանը՝ Բալաձիգ, ան պատճառաւ որ Բալ բառը որ մէկ կամ մասնաւոր ըսել է՝ կը նշանակէ նաև անկանոն աղօտ լոյս մը. ինչ «Եմուտ յայն և տեսանէ բալ աստղաձաճանչ» : Կամ «Տեսանէ բալ հրափայլ, և զաստուածս որ անցեալ նստէր ի վերայ ամթոռոյ» : Պատմ. Առեւ. էջ 160 :

կրնայ ըլլալ որ բալաճիգ աստղերուն լուսաւոր բալը միանալով իրենց կեդրոնի աստղին հետ՝ հատնի. նմանապէս ան բալերն ալ՝ որոնց կեդրոնը աստղ չկայ, ատենով կրնան խտանալ ու աստղ ձևանալ կրսէ :

Վիշաւոր գիտնալու բան մըն ալ աս է որ կ'երեւնայ թէ աստղերուն բալին ձևը կամաց կամաց կը փոփոխի, ու կը տարածուին, կ'ամփոփին և այլն. վասն զի հիւսիկէնս կ'ըսէ թէ իր ատենը հայկ կամ Որիոն համաստեղութեան բալը կը տարածուի և եղեր, հերշէլ իր ատեն ուրիշ ձևով կը տարածուի, իսկ հիմակուան ձևը երկուքին պատմածէն ալ տարբեր է :

Յարգգողի՝ լուսաւոր հետքն որ

1 Յարգգողի հետքն լուսաւոր պատճառն աս է, որ հին տտենի հայերը հեթանոսական մտածութեամբ կը տեսնէին թէ վահագն հայկազնը Ասորոց Բարշամ նահապետին մարագէն յարգ գողցեր է, ու տանելու ատեն ճամբան թափթըփելով ձևացեր է աս լուսաւոր ճամբան : Անոր համար ուրիշ տեղ ասանկ ալ գրուած կայ. Յարգգողն զհէփ ասորոս ծոյն. ըսել կուզէ թէ վահագն Բարշամին ետեւէն վազելու ատեն աս ճամբան ձևացեր է : Տաշկերէն սոման օղբոսն և ինչիչ զաւ ըսելն ալ ասկէ աւելուած կ'երեւնայ. թէ պէտ մահմետականք նաև հաճիւնք է օղբոսն կամ սոման հաճիւն ալ կ'ըսեն : Բայց ասկէ զատ ուրիշ անուաններ ալ տրուած կը գտնուին մեր հին գրքերուն մէջ աս յարգգողի ճամբուն՝ որ մէյմէկ առասպել պատմութենէն առած կ'երեւնան, որոնց սկիզբը չգիտցուիր. այսինքն

Հին արեգակն ճանապարհ. որպէս թէ հին ատեն արեւ շատ անգամ անցնելով անկէ՝ լուսաւոր ճամբայ մը ձգեր է :

Այլոս արեգակն. ք թէ արեւ ան ճամբով երկնքէն վար ընկեր է :

Պարսկերէն. իբր թէ երկինքը երկու բացուած ըլլայ ու մէջէն աստուածներուն բնակարանը երևնայ :

Կարն ծիրանագու. ո՞ գիտէ ինչ առասպել կը նշանակէ. կ'երեւնայ թէ հայոց աստուածներէն մէկը երկնքէն դէպի ծով կարծ ձգած ըլլայ, և կար թին թեւին վրայէն ծիրանի կամ բոցի գունով գուլշի կ'ելէ :

Մասը և իշան օդոյն. իբր թէ օդի մէջ բնակող աստուածոց ձիերուն մնուրը ըլլայ :

Կոռն էրիւն. առասպելներ են, որոնց նշանաւ

Սդի քարեաւ. կու թիւնը չգիտցուիր :

Իսկ Ծիւր իւրիւն ըսելը յունական ոճ է, վասն զի Յունաց առասպելներուն նայելով, Հերան Հերակղէսին (որ իրենց վահագն է) կամ տուած առտենը իբր թէ անկէ քանի մը կամ թիւ ցատքեր է ու յարգգողը անով եղեր է :

կը տեսնես՝ ուրիշ բան չէ, բայց եթէ միատարած գօտիի պէս բալ մը որ կը տարածուի հիւսիսային արեւելքէն դէպի արեւմտեան հարաւ, որուն վերայի աստղերէն խիստ շատը բալ չունին. կան մէկ քանի խումբ աստղեր ալ որ յարգգողի լուսէն զատ ունին նաև մասնաւոր բալեր :

Բալերուն և բալաճիգ աստղերուն թիւը երկու հազարէն աւելի համարուած է : Երկնք վրայ ընդհանրապէս այսչափ խօսելէն ետքը կը թողունք որ ընդարձակ աստղաբաշխութիւն գրողները տեղն'ի տեղը խօսին՝ անոնց ամէն երեւոյթները մէկիկ մէկիկ մեկնելով, և ամէն մէկ բալաճիգ աստղերուն տեղն ու դիրքը նշանելով, որ մենք աս յօդուածիս մէջ զանց ըրինք :

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Բրածոյ կենդանեաց ոսկորներ :

ԲՐԱԾՈՅ՝ կ'ըսուին մասնաւոր կերպով կենդանեաց մարմիններ որ անյայտ ժամանակէ՝ ի վեր գետնին տակը թաղուած ու հոն մնացած են : Եւ մարմինները երկու կերպով կը գտնուին հողին տակը. մէյմը քարացած, մէյմըն ալ՝ միայն իրենց ձևը քարի կամ հողի վրայ տպաւորած :

Վերնէր անունով երեւելի բնագէտին կարծիքն է թէ քարացմունքներու մէջ ամենէն հինները առաջին կարգի հողերուն մէջ կը գտնուին, ու խիստ պարզ կազմուածք ունեցող կենդանեաց մնացորդներ են : Երկրորդական ըսուած հողերու մէջ աւելի ճառագայթաձև ու կակղամիս ըսուած կենդանեաց ոսկորներ կամ կտո-

1 Գղ. Fossile. Բրածոյ, գետնի քարէն ելած :

2 Ճառագայթաձև կենդանիները տեսակ տեսակ կենդանաբոյսներն են (գղ. rayonné). իսկ խալիւն (գղ. mollusque) ոսկր չունեցող կենդանիներն են :